դապետի ժամանակագրութենէն,„ հանուած խաչատուր վարդապետի ընդօրինակած Վարդան վրդ.ի Սաղմոսի Մեկնութենէն։ խաչատուր այդ գիրքն ընդօրինակած է 1622ին (ՌՀԱ, ոչ 1522, ինչպէս տպուած է էջ 37, նոյնպիսի սխալ մ'ալ էջ 40 ՌՀԴ = 1524, իմա 1624), բայց այս քաղուածներն եղած ըլլալու են Վ.ելի եաքը։ Գրիգոր կամախեցին շատ լաւ ծանօթ անձնաւորութիւն է. եւ այս քաղուածներն եղած են անոր ընդարձակ ժամանակագրութենէն, որ կը գտնուի այժմ Երուսաղէմի Մատենադարանին մէջ։ Այդ աշխատութիւնն ԺԶ—ԺԷ դարերու պատմութեան համար անհրաժեշտ աղբիւր մ'է, եւ շատ բաղձալի է որ Աղանեանց ձեռք ձգէր զայն եւ տար ի լոյս Դիւանի հատորներէն միոյն մէջ։ Գրիգոր կամախեցւոյ մասին տես Հանդ. Ամս. 1911, էջ 1 եւ յաջ. (Հ. Գ. Գալէմքեարեանի "Յովհ. Խուլ„ հատուածը)։

Մեր վերջին խօսքն պիտի ըլլայ ցանկալ վաստակաւէր Հրատարակչին յարատեւ եռանդ եւ յաջողութիւն՝ շուտով ի լոյս հանելու "Դիւան„ի յաջորդ հատորներն ալ։

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. Եկեղեցւոյ: Գ.— Պսակի: Բազմաձայն մշակմամբ Ի. Ղ.: Գինն՝ 70 կոպ.:

Ժամանակը շատ բան կը փոխէ։ Ցանեակ տարիէ քիչ մ'աւելի յառաջ երբ Պր. Եկմալեան Ս. Պատարագի երգեցողութիւնը կը հրատարակէր հայկական եղանակներու հոգին ստուար մեծամասնութեան մը կողմանէ ընջուած կը համարուէր եւրոպական ձայնագրութեամբ։ Այսօր սակայն այսպէս չէ. Պր. Սինանեան եւ ազգային ուրիշ քաջ երգայարդարներ ժողովրդական եղանակները նօտայի դնելով հայկական եղանակներուն գեղարուեստական արժէք կու տան. շարականները կանոնաւորելու եւ տիրացուներուն քմածին զարձուածները կարճելու համար միակ միջոցն է եւրոպական նօտան։

Այս վախճաններու կը ծառայէ առաջիկայ Գ. տետրակս որուն մէջ ձայնագրուած է քառաձայն խառն խմբի համար՝ *Nr. 1* Նայեցայ է Ծով, *Nr. 2* Ցողերով ես 'շուշաբ օրհնութիւն, *Nr. 3* Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի, *Nr. 4* Սուրբ Աստուած, Փառօք, Առաքեալ, *Nr. 5 a* եւ *b* Ով երանելիդ ամենեցուն, *Nr. 6* Սէր Ընծայ Ուրբէ։

Գործոյս պարտիտուրները հրատարակուած են եւրոպական երկտող նօտագրութեամբ եւ յարմարութիւն ունին՝ թէ երգեցող առանձինն խմբամասերու համար եւ թէ դաշնակի ընկերակցութեան։

Գործնական փորձերն միայն կրնան պսակել քրտնաջան Հեղինակին արդիւնաւոր վաստակը։

Հ. Վ. ԲՈՒՆԿՈՒՑԵԱՆ

# ԱՅԼԵՒԱՅԼՔ

1. *Դարձեալ Ստեփանոս Վանականի Ցիշատակարանին գրութեան թուականը:* Վերը (Հանդ. Ամս. 1913, էջ 497—499) առթիւ Գր. Տէր-Պօղոսեանի Նոր հրատարակութեան խօսեցանք Ստեփ. Վանականի Ցիշատակարանին վրայ (կենսագրութիւն Մաշտոց կաթողիկոսի, 898— † 899 Հոկտ. 13[1])։ Այն տեղ մոռցած էինք յիշել որ Ցիշատակարանս նորագոյն տպագրութիւն մ'ալ ունի Գիւտ ա. ք. Աղանեանցի Դիւանին մէջ (Հտր. Ժ. էջ 504—508) հանուած Մարզուանի Մայր-Մաշտոցէն։

Աշխարհի թուականը Մարզուանեան օրինակին մէջ է՝ ՑԿ (6060), որ բաւական կը մօտենայ մեր առաջարկած ընթերցուածին՝ ՑՂ։

Ներուի ինձ կրկին քննութեան նիւթ ընել Ցիշատակարանին գրութեան թուականը. վասն զի յիշեալ տեղն անուշադիր ըլլալով կարեւոր կէտի մը, ամբողջ հաշիւն սխալ արդիւնք մը տուած էր։

Ստեփանոս երեք տեսակ թուական կը գործածէր.

1. Աշխարհի թուականը՝ ՑՂ (ըստ մեր ուղղագրութեան).

2. Հռոմի շինութեան թուականը՝ ՌԽՋ։

3. Հայոց թուական՝ ՅԽԲ։

Հռոմի շինութեան թուականը կը սկսի 21 Ապր. 753 (Ն. Ք.), որ իւր 1000ամեայ շրջանն բոլորելով Փիլիպպոս Արաբացւոյ օրով՝ 247ին (Յ. Ք.), կրկին սկսաւ իւր ընթացքը։ Ըստ այսմ Ստեփանոսի ակնարկած թուականը՝ 646 կը համապատասխանէ փրկչական 893 Ապր. 21 — 894 Ապր. 20ին։

[1] Այսպէս ըստ սովորական հաշուին. 1912 Յուլիսին Գաղղիոյ, Ցրդասայ թախտին վրայ փլատակներու մէջ կարդացի տապանագիրս. ՅԽԶ ԹՎ.ԻՆ ՓՈԽԵՑԱՒ ՏՐ ՄԱՇՏ[ՈՑ]։ Եթէ կաթողիկոսին կը վերաբերի արձանագրութիւնս, կը կարօտի քննութեան Մաշտոցի մահուան ճշգրիտ թուականը։

digitised by A.R.A.R.@

Հայոց թուականն՝ 342 իւր շրջանը կը սկսի փրկչական 893 Ապր. 17էն — 894 Ապր. 16։ Այսպէս իմանալու է նաեւ Աշխարհի թուականն 6090 (սկսեալ 5197էն Ն. Ք.)։

Ստեփանոս կը յիշատակէ նաեւ ամսոյն օրը, երբ աւարտած է, այս ձեւով. “յառաջ քան զՀինգ կաղանդացն ապրիլի, որ օր էր ԺԴ Հրոտից ամսոյն։„ Հռովմէական ամսամարին “յառաջ քան զՀինգ կաղանդացն ապրիլի„ բացատրութեամբ կ'իմացուի Մարտ 28ը (այս կէտին մտադիր ըրաւ զիս Dr. W. Lüdtke ի Kiel)։ Ինչպէս նկատած էինք արդէն, Մարտ 28ին հետ լիովին համապատասխան է Հրոտից 16ը 892—895 տարիներուն մէջ։ Սոսկ Մարտ 28ին թէ հռովմէական եւ թէ հայկական տարիներն տակաւին լրացած չեն ըլլար, մինչ քրիստոնէական թուականը արդէն յառաջացած էր **894**ին մէջ։

Այս հաշուին աւելի մանրամասնութեամբ կը հաստատէ Ստեփանոս, նշանակելով նաեւ ամսոյն օրուան պատկերը՝ “ի մեծի հինգշաբաթի„ եւ գրութեան ժամը՝ “ի վեցերորդ ժամու„։ Մարտ 28ին Աւագ Եշ. կրնայ պատահիլ միայն **894** տարւոյն, երբ Զատիկն կ'իյնայ Մարտ 31ին։

Ըստ այսմ Ստեփանոս իւր Յիշատակարանն աւարտած կ'ըլլայ Աշխարհի ՑՂ (= 893/94) Հռոմայ շինութեան ՌԽՋ, “յառաջ քան զՀինգ կաղանդացն ապրիլի„ (= **894** Մարտ **28**) եւ Հայոց ՅԽԲ, Հրոտից ԺԴ (= **894**, Մարտ **28**), Աւագ Հինգշաբթի օրը, ժամը 6ին (= կէսօրը, մօտաւորապէս 12ին)։

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

2. “Յոյս„ Պարբերաթերթ: — Թուրքիոյ հակալքոլական ընկերութեանց: — Մեր հայկական լրագրութիւնն մանաւանդ ներկայիս չտեսնուած կենդանութիւն մը ցոյց կու տայ, հեղեղելով հրապարակին վրայ զանազան տեսակ թերթեր, քաղաքական, գրական, գեղարուեստական, տնտեսագիտական եւ զաւեշտականը. սակայն տակաւին անտեսնուած թերթի մը պէտքն կը զգացուէր, որ պիտի ըլլար ոչինչ նուազ օգտակար ու կարեւոր — հակաալքոլական թերթի մը հրատարակութիւնը։ Եւ ուրախ ենք, որ ահա այս պակասն ալ տաճկահայ հակալքոլական ընկերութիւնը կու գայ լրացնելու։

Թերթս սկսաւ հրատարակուիլ յունիս մէկէն, եւ արդէն իսկ առաջինկայ համարիս մէջ հիւրընկալած գիտական յօդուածներով, բաւականէն աւելի որոշ գաղափար մը կու տայ մեզի իւր ապագային գծելիք ուղղութեան մասին։ Կը մաղթենք ի սրտէ, որ միշտ հաւատարմաբար յարատեւէ, այդ իւր առաջադրեալ ուղղութեան մէջ, եւ լիայոյս ենք որ “Յոյսը„ պիտի ըլլայ իրապէս կրթութեան գործքի լուրջ թերթ մը։

Ինչպէս հասարակօրէն կ'ըսուի չկայ կեանքի մէջ որեւիցէ գործք մը, որ ըլլայ այնչափ գեղեցիկ որչափ դաստիարակական ու կրթական գործքերը։ Եւ ինչ կայ արդեօք մեր այս կեանքին մէջ այնչափ վնասակար ու կործանարար քան — ալքոլն —, որով մարդկութեան մեծամասնութիւնն կը հիւծի ու կը մաշի ֆիզիքապէս ենթարկուելով անոր քայքայող ու անդամալուծող զօրութեան տակ. թողլով դեռ անկէ ծնունդ առնող աւելի ծանր ու վտանգաւոր հոգեկան խանգարմունքները։ Եւ ինչպէս շատ անգամ փորձը իրականին մէջ մեզի ցուցուցեր է, չէ եղած տակաւին գինեմոլ մը, որ կարող եղած ըլլայ իւր բարոյականութիւնն անաղարտ պահել, բանաւոր մարդուն ամենէն ազնիւ ու քնքոյշ մասը։

Հետեւաբար ուրախալի երեւոյթ մըն է, “Յոյս„ի նման դաստիարակիչ թերթի մը հրապարակ գալը, որուն նպատակն պիտի ըլլայ պայքար մղել ամենայն եռանդեամբ, բանաւոր մարդուն մեծ թշնամւոյն — ալքոլին — դէմ. եւ այսու ժողովրդականացնել առողջաբանական տարրերքն եւ որոշ ու հասկնալի եղանակաւ մատնանշել գործնական միջոցներու կիրարկումը։ Երբ այսպիսի խմբուեր են ահա թերթիս շուրջ բազմութիւն մը մասնագէտ դոկտորներ, ի մէջ այլոց “Հանդիսի„ս բազմաշխատ փութաջան աշխատակիցն Դոկտ. Վահրամ Յ. Թորգոմեան առանձինն նամակաւ կը խոստանայ իւր աջակցութիւնը, սոյն գեղեցիկ եւ օգտաւէտ ձեռնարկին մասին։ Ուստի եւ կը յուսանք թէ “Յոյսը„ այսպիսի ուժեղ հսկողութեան մը ներքեւ, կանոնաւորապէս պիտի շարունակէ իւր ընթացքն եւ այսու պիտի կարենայ քիչ ժամանակէն հսկայաքայլ յառաջադիմել, որով իրապէս հակալքոլական հայութիւն մը պիտի ունենանք, իցիւ թէ։

Հ. Յ. ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՎԻԵՆՆԱ. ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ